ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՀԱՅՐԵՆԻ ԲՆԱՇԽԱՐՀԻ ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԵՐԳԻՉԸ

Մարտիրոս Սարյան...։

Վերջերս Լենինյան մրցանակ շնորհվեց մեծատաղանդ արվեստագետ, ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ, հայ գեղանկարչության նահապետ և Հայրենի բնաշխարհի անկրկնելի վարպետ Մարտիրոս Սարյանին, նրա «Իմ Հայրենիքը» նկարների շարքի համար։

Հպարտության, երախտագիտության ջերմ զգացմունքներով է համակվել հայ ժողովրդի սիրտը՝ իր արժանավոր զավակի գնահատման այս ուրախ առիթով։

81 տարեկան է այսօր Վարպետը, բայց միշտ թարմ, երիտասարդ, կենսահորդ են և՛ նրա արվեստը, և՛ նրա տաղանդը, հակառակ նրա մազերին իջած ձյան։

«Դուք ոչ մի առնչություն չունեք տարիների հետ։ Դուք Սարյանն եք, իսկ Սարյանը անտարիք է։ Ձեր ստեղծած ամեն մի նկարը կանգնեցնում է ժամանակը և դա հենց ինքնին երիտասարդությունն է»,— գրել է արդարորեն Վիլյամ Սարոյանը Վարպետին ուղղած իր ջերմ շնորհավորական խոսքի մեջ։

Մարտիրոս Սարյանի արվեստը հզոր է, ինքնատիպ, կենսահաստատ, ժողովրդական։ Հիանալի է նրա ստեղծագործությունների վառ գունագեղությունը, արևաշող պայծառությունը։

Հայ նկարչական արվեստի մեր օրերի մեծ Վարպետը վառ ու անկրկնելի գույներով է տվել Հայաստանի բնության հեքիաթային գեղեցկությունն ու գրավչությունը, երգել է կտավների վրա վերածնված մեր Հայրենիքը ծիածանի յոթը գույներով, պատկերել է մեր ժողովրդի պայծառ ու հերոսական առօրյան, աշխատանքային սխրագործությունները։

Մեր Հայրենի բնությունը նոր կյանք առած ապրում է և շնչում Մարտիրոս Սարյանի նկարների մեջ։ Սարյանն այնքան է հարազատ Հայաստանի բնաշխարհին իր արվեստագետի զգայնությամբ, այնքան ճշմարտորեն է զգում մեր երկինքն ու մեր լեռները, որ իրոք կարելի է բացականչել Վեհափառ Հայրապետի խոսքերով. «Հայաստանի բնությունը նման է Սարյանի նկարներին»։

Հայրենի հողի և հարազատ ժողովրդի հետ շփվելուց ծնավ այն իրավ, աղդային,

ինքնատիպ արվեստը, որը ծանոթ է արվեստի աշխարհում որպես սարյանական։ Հայաստանի արևի ջերմությունը կա աշխարհահռչակ Վարպետի բոլոր կտավներում։ «Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունը հարազատ է ինձ իր զարմանալի, ազգային երանգավորումով, ես կասեի արևային հընչեղությամբ,—գրում է իր ողջույնի խոսքի մեջ անվանի կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը։—Նրա լավատեսական կտավները ինձ համար երաժշտություն են, դրանց մեջ շատ են լույսն ու հրճվանքը։ Սարյանը վառ ազգային նկարիչ է և ինձ չափազանց հմայում է նրա ազգային կոլորիտը»։

Սարյանը երանգների անզուգական բանաստեղծն է, գույների մեծ երաժիշտը։ Արև, ճշմարտություն, կյանք. ահա Սարյանի երանգապնակի պարզ ու բնորոշ գույները։

Սարյանը միաժամանակ մարդու բարդ ու խորունկ ներաշխարհի արտահայտիչն է և հայ ժողովրդի զգայնության, լուսաբաղձության, անսպառ կենսասիրության երգիչը։ Պատահական չէ, որ Վարպետը շատ է սիրել ծաղիկները։ Այդ ծաղիկների մեջ վարպետը տեսել է, որսացել հայ ժողովրդի հավերժության խորհուրդը։

Ջերմ հայրենասեր է նաև Սարյանը։ Նա իր արևաբույր կտավների մեջ դրել է իր ջերմ հայրենասերի սիրտը։ Նրա կտավները հայրենասիրական սրտառուչ երգեր են՝ ձօնված հայ ժողովրդին և մեր Հայրենիքին։

Մարտիրոս Սարյանը սրտագին բարեկամն է նաև Ազգիս Վեհափառ Հայրապետի։ Նա որպես արվեստագետ և հայ ժողովրդի սրբությունների երկրպագու, ջերմորեն սիրում է Ս. Էջմիածինը։ Հաճույք է տոն օրերին և հաճախ այլ առիթներով, նրան տեսնել բարձրանալիս Վեհարանի սանդուղքներն ի վեր։ Վեհարանի ուրախություններին նա միշտ բազմում է Ամենայն Հայոց Հայրապետի կողքին և ավելի քան հաճույք է միշտ լսել նրա ջերմ, հայրենասիրական խոսքը։

Պետական բարձրագույն մրցանակի արժանացած օրերին, Ազգիս Վեհափառ Հայրապետը, հանուն Մայր Աթոռի, շնորհավորեց Վարպետին հետևյալ ողջույնի խոսքերով.

«Մեր հայրենիքի մեծագույն շքանշանով ձեր պարգևատրումը Մեր սիրտը լցրեց ջերմ ուրախությամբ և գոհունակությամբ։

Մի անգամ ևս ամբողջ աշխարհի առաջ հնչակվեց Ձեր մեծ տաղանդը և գնահատվեց ըստ արժանվույն։

Ձեր արվեստը մնայուն արժեք է, անփոխարինելի մի գանձ, որ Դուք նվիրաբերում եք հայ ժողովրդին, որի հարազատ զավակն եք։

Մեր ժողովուրդը, Ս. Էջմիածինը և մենք բոլորս հպարտ ենք Ձեզանով և երախտապարտ։

Անսահման սիրով ողջունում ենք և մաղթում Ձեզ, մեծանուն Վարպետ, ևս երկար, արևոտ տարիներ քաջառողջությամբ և խաղաղությամբ։

Ձեզ և Ձեր շնորհալի զավակներին Մեր օրհնությունը»։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, սրտագինս շնորհավորելով մեծատաղանդ Վարպետին նրա պետական բարձրագույն շքանշանով պարգևատրման ուրախ առիթով, բարեմաղթում է երկար ու երկար տարիներ՝ լի ստեղծագործական նվաճումներով, ի փառս հայ արվեստի և հայ ժողովրդի։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ

Մարտիրոս Սարյան

ԼՈՒՍԱԲԱՑ

Մարտիրոս Սարյան



ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

Մարտիրոս Սարյան

ՆԱՏՈՒՐ-ՄՈՐՏ— ԾԱՂԻԿՆԵՐ

Մարտիրոս Սարյան